

<b>Տեսակը</b>	<b>Քաղաքականություն</b>	<b>Տարբերակը</b>	<b>3.0</b>
<b>Ընդունող մարմինը</b>	<b>Խորհուրդ</b>	<b>Կարգավիճակը</b>	<b>Գործում է</b>
<b>Հաստատող արձանագրության և որոշման համարը</b>	<b>Թիվ 33 արձանագրություն Թիվ 78 որոշում</b>	<b>Ընդունման վայրը</b>	<b>Ք. Սպեփանակերպ</b>
<b>Կիրառման շրջանակը</b>	<b>Գլխավոր գանձապետ, Ֆինանսական շուկաներում գործառնությունների, Ռիսկերի կառավարման ստորաբաժանումներ</b>	<b>Ընդունման ամսաթիվը</b>	<b>05.11.2018թ.</b>
		<b>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</b>	<b>05.11.2018թ.</b>
		<b>Ուժը կորցնելու ամսաթիվը</b>	

«Արցախբանկ» ՓԲԸ  
Խորհրդի նախագահ՝

Ա. Սելեֆյան



**«ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ**  
**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ**  
**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

	<b>ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ</b>
<b>Նախագիծը կազմող</b>	Գլխավոր գանձապետ
<b>Նախագիծը ստուգող</b>	Ինովացիաների, ռազմավարության և մեթոդաբանության վարչություն Իրավաբանական ծառայություն Ռիսկերի կառավարման կենտրոն
<b>Նախագիծը հավանության արժանացնող</b>	Վարչություն

**«Արցախբանկ» ՓԲԸ Ֆինանսական շուկաներում գործունեության քաղաքականությունում կատարված էական փոփոխությունների վերաբերյալ**

Հ/Հ	<b>Ներքին իրավական ակտում կատարված էական փոփոխությունների բնութագիրը</b>
1.	Քաղաքականության դրույթների համապատասխանեցում «Արցախբանկ» ՓԲԸ ներքին վարչակազմակերպական կառուցվածքի փոփոխություններին:
2.	Քաղաքականությունում առկա ֆինանսական գործառնությունների գծով սահմանափակումների նորմատիվային մեծությունների փոփոխություն՝ դրանց համապատասխանեցում Բանկի ներկայիս պահանջներին: Ընդ որում, Քաղաքականությունում կիրառվող ֆինանսական գործառնությունների գծով սահմանափակումներում գործածվող «ընդհանուր կապիտալ» հասկացության հստակեցում՝ այն դիտարկելով որպես «նորմատիվային ընդհանուր կապիտալ»:
3.	Սահմանում, որ Քաղաքականությամբ նախատեսված արժեթղթերից բացի այլ արժեթղթերով գործառնությունների իրականացումը, բացի Խորհրդից, կարող է թույլատրվել նաև Վարչության որոշմամբ, եթե դրանց մարման ժամկետը չի գերազանցում հինգ տարին, ընդ որում՝ մտցվել են նաև սահմանափակումներ նշված արժեթղթերի ընդհանուր ծավալի գծով, ինչպես նաև վերավաճառքի դեպքում արժեթղթեր ձեռքբերելիս:
4.	Քաղաքականությունում ներառվել է Բանկի կողմից նոր Հիմնական ներդրումային ծառայությունների մատուցումը, դրանք են՝ - Հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը, - Բանկի կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարումը:
5.	Ֆինանսական շուկաներում գործառնությունների ստորաբաժանման կողմից մասնաճյուղերին հատկացված սահմանաչափերից շեղմամբ գործառնությունների գրանցման մատյանի վարման պահանջի հանում՝ հաշվի առնելով, որ բոլոր արտարժույթային գործառնությունների համար նշված ստորաբաժանման կողմից վարվում է ընդհանրական արտարժույթային գործառնությունների գրանցման մատյան, որում արտացոլվում են նաև շեղմամբ գործառնությունները:
6.	Արժեթղթերի դասերի անվանումների և դրանց սահմանումների փոփոխություն՝ համապատասխանեցում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ (ՖՀՄՍ) 9-ի պահանջներին:
7.	Սահմանում, որ Բանկը կարող է ներդրումներ իրականացնել նաև ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված պարտատոմսերում:
8.	Բանկի հետ ռեպո/հակադարձ ռեպո համաձայնագրեր կնքելու հնարավորության նախատեսում նաև Բանկի կորպորատիվ հաճախորդների համար:
9.	Արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման ընթացքում շահերի բախման բացառմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումների սահմանում:
10.	Այլ՝ խմբագրական, հստակեցնող փոփոխություններ:

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Հ/Հ	ԳԼՈՒԽՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԷԶ
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	4
2.	ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	4
3.	ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	5
4.	ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ	6
5.	ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ	17

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Արցախբանկ» ՓԲԸ Ֆինանսական շուկաներում գործունեության քաղաքականությունը սահմանում է Բանկի՝ ֆինանսական շուկաներում գործունեության հիմնական նպատակներն ու սկզբունքները, արժուպային, արժեթղթերի և դրամային (փողի) շուկաներում գործունեության հիմնադրույթներն ու սահմանափակումները, թղթակցային հաշիվերի բացման, վարման և փակման հիմնական պայմանները, արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման ընթացքում շահերի բախման բացառման և կանխարգելման միջոցառումները, ֆինանսական շուկաներում գործունեություն իրականացնող աշխատողների լիազորությունները:

1.2 Քաղաքականությունը հաստատվել է՝ հիմք ընդունելով գործող օրենսդրությունը, ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերը, այդ թվում՝ «Արժուպային կարգավորման և արժուպային վերահսկողության մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքները և այլ իրավական ակտեր:

1.3 Քաղաքականությունում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարվում են միայն Բանկի խորհրդի որոշմամբ՝ Խորհրդի անդամների կամ Վարչության առաջարկով կամ գործող օրենսդրության պահանջով:

Քաղաքականությունը պետք է վերանայվի Բանկի գործունեության միջավայրի փոփոխությանը զուգընթաց, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

1.4 Քաղաքականությունն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են ճանաչվում Խորհրդի՝ 18.12.2015թ. թիվ 193 որոշմամբ հաստատված «Արցախբանկ» ՓԲԸ Ֆինանսական շուկաներում գործունեության քաղաքականությունը և Խորհրդի՝ 14.05.2013թ. թիվ 119 որոշմամբ հաստատված ««Արցախբանկ» ՓԲԸ Արժեթղթերով իրականացվող գործարքների արդյունքում հնարավոր շահերի բախման բացառմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման կարգը:

1.5 Քաղաքականությունը ներքին օգտագործման փաստաթուղթ է և հասանելի է Բանկի ողջ անձնակազմին: Քաղաքականության և դրա փոփոխությունների հասանելիությունն ապահովում է Բանկի մեթոդաբանության ստորաբաժանումը՝ Տեղեկատվական համակարգում այն տեղադրելու և ծանուցելու միջոցով:

## 2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### 2.1 Տերմիններ և հասկացություններ.

**Բանկ**՝ «Արցախբանկ» ՓԲԸ.

**Քաղաքականություն**՝ «Արցախբանկ» ՓԲԸ Ֆինանսական շուկաներում գործունեության քաղաքականություն.

**Բանկի խորհուրդ** կամ **խորհուրդ**՝ Բանկի կանոնադրության համապատասխան Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ձևավորված ընդհանուր կառավարման կոլեգիալ մարմին.

**Բանկի վարչություն** կամ **Վարչություն**՝ Բանկի կանոնադրությամբ նախատեսված Բանկի կոլեգիալ գործադիր մարմին.

**Բանկի վարչության նախագահ** կամ **Վարչության նախագահ**՝ Բանկի կանոնադրությամբ նախատեսված Բանկի միանձնյա գործադիր մարմին.

**Ստորաբաժանում**՝ ֆինանսական շուկաներում գործառնությունների ստորաբաժանում.

**Հսկողական գործառնություններ իրականացնող ստորաբաժանումներ**՝ Ներքին աուդիտ, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման ստորաբաժանումներ.

**Բանկի ներքին իրավական ակտ**՝ Բանկի կառավարման մարմինների կողմից հաստատված և Բանկում պարտադիր բնույթ ունեցող փաստաթուղթ:

## 2.2 Հապավումներ.

**ՀՀ** Հայաստանի Հանրապետություն.

**ԱՀ** Արցախի Հանրապետություն.

**ՀՀ ԿԲ**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

**ԱՊԿԿ**՝ Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե:

## 3. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Բանկի կողմից ֆինանսական շուկաներում գործունեության հիմնական նպատակներն են՝

- Իրացվելիության կառավարում,
- Ֆինանսական հոսքերի արդյունավետ կառավարում,
- Բանկի արտարժույթային ռիսկերի կառավարում,
- Բանկի արժեթղթերի պորտֆելի ձևավորում և արդյունավետ կառավարում,
- Արտարժույթային, տոկոսային և ֆինանսական շուկաների հետ կապված ռիսկերի նվազեցում և կառավարում,

• Ազատ դրամական միջոցների հնարավոր առավելագույն եկամտաբերության ապահովում:

3.2 Բանկի կողմից ֆինանսական շուկաներում գործունեության սկզբունքներն են՝

• Իրականացնել գործող օրենսդրությանը և Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխան գործունեություն.

• Ֆինանսական շուկաներում գործունեության ընթացքում կիրառել իրավասությունների բաշխման և որոշումների կայացման հստակ մեխանիզմներ.

• հաճախորդների և գործընկերների հետ գործել ազնիվ և անկողմնակալ՝ չխախտելով վերջիններիս շահերը և իրավունքները.

• ապահովել Բանկի գործունեության ընդլայնման բարձր տեմպեր՝ հաշվի առնելով ռիսկերի նվազեցման ու կառավարման և իրացվելիության ապահովման նպատակադրումը,

• Ներդրումային ծառայություններ մատուցելիս ձեռնարկել բավարար միջոցներ՝ Բանկի աշխատողների, Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և հաճախորդների միջև շահերի հնարավոր բախումները կանխարգելելու և բացառելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հնարավորինս նվազեցնելու նպատակով.

• Ֆինանսական շուկաներում գործունեության ընթացքում կիրառել ռիսկերի մոնիթորինգի և կառավարման արդյունավետ մեխանիզմներ:

#### **4. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ**

4.1 Քաղաքականությունը հանդիսանում է Բանկի գործունեության և զարգացման ընդհանուր ռազմավարության բաղադրամասը և ներառում է ֆինանսական շուկաներում արդյունավետ գործելակերպի հիմնադրույթները:

Բանկի կառավարման մարմինները՝ Բանկի խորհուրդը և վարչությունն ապահովում են Քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ ներքին իրավական ակտերի մշակումն ու ներդրումը, ընդ որում, նշված ներքին իրավական ակտերը պետք է ապահովեն գործարքներ իրականացնող և ձևակերպող ստորաբաժանումների գործառույթների իրարից հստակ սահմանազատումը, ինչպես նաև գործարքների իրականացման նկատմամբ ստուգման համակարգերի ներդնումը:

4.2 Քաղաքականության առարկան է.

• Արժութային շուկաներում գործունեության քաղաքականությունը.

• Արժեթղթերի շուկաներում գործունեության քաղաքականությունը.

• Դրամային (փողի) շուկաներում գործունեության քաղաքականությունը.

- Թղթակցային հաշիվերի բացման, վարման և փակման քաղաքականությունը.
- Արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման ընթացքում շահերի բախման բացառման և կանխարգելման միջոցառումները.
- Ֆինանսական շուկաներում գործունեություն իրականացնող աշխատողների լիազորությունները:

#### **4.3 Արժութային շուկաներում գործունեության քաղաքականություն.**

##### **4.3.1 Արտարժութային գործառնությունների իրականացման նպատակները.**

Բանկում արտարժութային գործառնությունների իրականացման նպատակներն են.

- Արտարժութային անհրաժեշտ իրացվելիության ապահովում,
- Արտարժութային դիրքի կառավարում,
- Կանխիկ միջոցների ապահովում,
- Առևտրային նպատակներով արտարժութի առք ու վաճառք:

##### **4.3.2 Արտարժութային գործառնություններ.**

• Բանկն արտարժութային գործառնություններ է իրականացնում ՀՀ/ԱՀ և միջազգային ֆինանսական շուկաներում՝ ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ գործընկերների և հաճախորդների հետ, որոնց հետ առկա են փոխհարաբերությունները կարգավորող հիմքեր:

• Բանկն իրավասու է իրականացնել օրենսդրությամբ սահմանված, ինչպես նաև միջազգային պրակտիկայում կիրառվող արտարժութային բոլոր գործառնությունները, եթե դրանց իրականացման կարգը սահմանված է Բանկի ներքին իրավական ակտերով:

##### **4.3.3 Արտարժութային փոխարժեքներ.**

Բանկն արտարժութային գործառնություններ իրականացնում է Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն Վարչության նախագահի կողմից սահմանված արտարժութային փոխարժեքներով:

Արտարժութային փոխարժեքները սահմանվում են՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները.

- ա) ՀՀ ԿԲ կողմից հայտարարված միջին շուկայական փոխարժեքները,
- բ) ՀՀ արժութային բորսայում և միջազգային ֆինանսական շուկաներում ձևավորված փոխարժեքները,
- գ) ներբանկային շուկայում ձևավորված փոխարժեքները,
- դ) ՀՀ փոխանակման կետերում ձևավորված փոխարժեքները,
- ե) Բանկի արժութային դիրքը (ըստ առանձին արտարժութայինների),

զ) այլ գործոններ (շուկայի ուսումնասիրության հիման վրա կատարված կանխատեսումներ, այլ սուբյեկտիվ գործոններ):

Սահմանված փոխարժեքներից շեղումով գործարքների իրականացման ընթացակարգը և սահմանափակումները հաստատվում են Վարչության կողմից:

#### **4.3.4 Սահմանափակումներ արտարժույթների նկատմամբ.**

Բանկի վարչության կողմից հաստատվում է այն արտարժույթների ցանկը, որոնք Բանկը կարող է գնանշել ամենօրյա կտրվածքով և որոնցով գործարքների իրականացումը չի հանգեցնի Բանկի բնականոն գործունեությունից շեղմանը:

Առանձին դեպքերում, Գլխավոր գանձապետի թույլտվությամբ, Բանկը հաճախորդի հանձնարարությամբ կարող է իրականացնել այլ արժույթներով գործարքներ՝ միայն տվյալ գործարքներով հաճախորդների պատվերով պայմանավորված բաց դիրքի փակման պայմանով:

#### **4.3.5 Սահմանափակումներ արտարժույթային դիրքերի նկատմամբ.**

Բանկի արտարժույթային դիրքի կառավարման համար պատասխանատու է Ստորաբաժանումը՝ ներքին իրավական ակտերով տրված լիազորությունների սահմաններում: Ընդ որում, հաճախորդների հանձնարարականների հիման վրա արտարժույթային սփոթ գործառնություններ իրականացնելիս Ստորաբաժանումը պետք է ղեկավարվի արտարժույթային դիրքերը փակ կամ հնարավորինս նվազագույն բաց մակարդակի վրա պահելու սկզբունքով:

Բանկի ներքին իրավական ակտերով Ստորաբաժանման համար կարող են սահմանվել.

- Բանկի առավելագույն բաց դիրքի սահմանաչափեր,
- սահմանաչափեր՝ առանց դիրքի փակման արտարժույթային գործառնություններ իրականացնելու համար,
- համախառն և զուտ արտարժույթային դիրքերի ներքին նորմատիվներ:

#### **4.3.6 Սահմանափակումներ արտարժույթային գործառնությունների նկատմամբ.**

Բանկը ՀՀ ԿԲ հետ արտարժույթային գործառնություններ իրականացնում է առանց սահմանափակումների:

ՀՀ ռեզիդենտ բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների, ոչ ռեզիդենտ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների հետ արտարժույթային գործառնություններ իրականացվում են՝ հիմք ընդունելով տվյալ կազմակերպության համար Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ռիսկի առավելագույն չափը, ինչպես



նաև ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված սահմանափակումները, ընդ որում, մեկ կազմակերպության գծով ռիսկի առավելագույն չափը՝ ըստ գործառնությունների, չի կարող գերազանցել Բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալի 7.5 տոկոսը և համախառն չափը՝ 20 տոկոսը:

#### **4.3.7 Սահմանափակումներ մասնաճյուղերի կողմից իրականացվող արտարժույթային գործառնությունների նկատմամբ.**

Բանկի մասնաճյուղերն արտարժույթային գործառնություններ իրականացնում են Բանկի կողմից հաստատված փոխարժեքներով:

Բանկի ներքին իրավական ակտերով կարող են սահմանափակվել մասնաճյուղերի կողմից իրականացվող արտարժույթային գործարքների ծավալները, առանձին մասնաճյուղի համար՝ նաև արտարժույթային դիրքերը:

Մասնաճյուղերի կողմից սահմանված փոխարժեքներից տարբերվող փոխարժեքներով, ինչպես նաև տրամադրված սահմանաչափի գերազանցմամբ գործարքներն ենթակա են հաստատման Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:

#### **4.3.8 Արտարժույթային գործառնությունների և եկամուտ/վնասի հաշվառման մատյան.**

Ստորաբաժանումը պարտավոր է ներքին իրավական ակտերով սահմանված կարգով վարել իր կողմից հաստատված արտարժույթային գործառնությունների, գրանցման մատյան:

#### **4.3.9 Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների առք ու վաճառք.**

Բանկում թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներով գործառնությունների իրականացման նպատակը թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների առք ու վաճառքի իրականացման միջոցով հնարավոր առավելագույն եկամտի ստացման ապահովումն է: Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների առք ու վաճառքի գործառնություններն իրականացվում են Ստորաբաժանման կողմից սահմանված ձուլակտորների գնանշումների հիման վրա, որոնք հաստատվում են Վարչության նախագահի կողմից:

### **4.4 Արժեթղթերի շուկաներում գործունեության քաղաքականություն.**

#### **4.4.1 Արժեթղթերով գործառնություններ.**

Բանկը կարող է մատուցել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված հետևյալ ներդրումային և ոչ հիմնական ծառայությունները, եթե վերջիններս նկարագրված և սահմանված են Բանկի համապատասխան ներքին իրավական ակտերով:

- Հիմնական ներդրումային ծառայությունները՝

- ✓ Հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում,

- ✓ Բանկի կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,

- ✓ Բանկի հաշվին և Բանկի անունից արժեթղթերով գործարքների կատարում:

- Ոչ հիմնական ծառայությունները՝

- ✓ Պետական արժեթղթերի պահառություն:

#### **4.4.2 Արժեթղթերով գործառնությունների իրականացման նպատակը.**

Բանկում արժեթղթերով գործառնությունների իրականացման նպատակներն են.

- արժեթղթերի պորտֆելի ձևավորում և կառավարում,

- արժեթղթերի առք ու վաճառքի իրականացում,

- արժեթղթերում ներդրումներից եկամտի ստացում,

- իրացվելիության կառավարում և անհրաժեշտ մակարդակի ապահովում:

#### **4.4.3 Արժեթղթերի նկատմամբ սահմանափակումներ.**

Բանկը կարող է ներդրումներ իրականացնել ներքոնշյալ արժեթղթերում՝ հետևյալ պայմաններով.

- ՀՀ պետական արժեթղթերում, ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերում՝ հիմք ընդունելով Բանկի կողմից սահմանված պետական պարտատոմսերի պորտֆելի առավելագույն ծավալի սահմանափակումները,

- ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված պարտատոմսերում,

- ՀՀ ռեզիդենտ ընկերությունների կողմից թողարկված բաժնետոմսերում և պարտատոմսերում, եթե թողարկող ընկերությունները ստացել են միջազգային վարկանշային կազմակերպությունների՝ «Մուդիզ»-ի (նվազագույնը – «B»), «ՍտանդարտընդՓուրզ»-ի (նվազագույնը – «B») կամ «Ֆիթչ»-ի (նվազագույնը – «B») կողմից վարկանիշ և ֆոնդային բորսայում անցել են ցուցակում կամ առկա է մարքեթ-մեյքերի պարտադիր գնանշման պարտականությունը, սակայն ոչ ավելի, քան Բանկի կողմից սահմանված մեկ թողարկողի արժեթղթերի գծով ռիսկի առավելագույն չափը:

- Այլ արժեթղթերով գործառնությունների իրականացումը թույլատրվում է

Վարչության որոշմամբ, եթե դրանց մարման ժամկետը չի գերազանցում հինգ տարին, մնացած այլ դեպքերում՝ բացառապես Խորհրդի համաձայնությամբ: Վարչության որոշմամբ ձեռքբերված արժեթղթերի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի Բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալի մեկ տոկոսը, ընդ որում երեքից հինգ տարի ժամկետայնությամբ արժեթղթերի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի Բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալի 0.5 տոկոսը:

- Այլ արժեթղթերով գործառնությունների իրականացումը թույլատրվում է Վարչության որոշմամբ նաև, եթե դրանք ձեռք են բերվել վերավաճառքի նպատակով, այլ դեպքերում՝ բացառապես Խորհրդի համաձայնությամբ:

Արժեթղթերում ներդրումներն իրականացվում են՝ հիմք ընդունելով օրենսդրությամբ, ՀՀ ԿԲ նորմատիվ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված արժեթղթերում ներդրումների սահմանափակումները:

Ընդ որում, սույն կետում նշված՝ միևնույն թողարկողին շնորհված՝ մեկից ավելի միջազգային վարկանիշների առկայության դեպքում Բանկը հիմք է ընդունում շնորհված վարկանիշներից խստագույնը:

#### **4.4.4 Արժեթղթերի պորտֆել**

Բանկն արժեթղթերը դասակարգում է երկու դասի՝

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Համապատասխանաբար Բանկը սահմանում է արժեթղթերի դասակարգման հետևյալ սկզբունքները՝

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող արժեթղթերը պետք է ապահովեն Բանկի համար ընդունելի եկամտաբերության մակարդակը և պահվեն պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքման նպատակով,

- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթեր՝ այն արժեթղթերը, որոնք Բանկը մտադիր չէ վաճառել մոտակա (կարճատև) ժամանակահատվածում, սակայն դրանք կարող են վաճառվել կամ պահվել մինչև մարման ժամկետի ավարտը (ժամկետային արժեթղթեր):

Բանկի արժեթղթերի պորտֆելում Քաղաքականության 4.4.3 ենթակետի առաջին, երկրորդ և երրորդ պարբերություններով սահմանված արժեթղթերում կատարված ներդրումների առաջնային նպատակն է Բանկի համար հանդիսանալ իրացվելիության

անհրաժեշտ մակարդակի ապահովման աղբյուր՝ միաժամանակ ապահովվելով ընդունելի եկամտաբերության մակարդակ: Այդ արժեթղթերի ծավալն արժեթղթերի պորտֆելում պետք է բավարար լինի Բանկի համար կարճաժամկետ դրամական միջոցների ներգրավման հնարավորություն ապահովելու համար, սակայն չպետք է գերազանցի նորմատիվային ընդհանուր կապիտալի 100 տոկոսը, ընդ որում պարտատոմսերի պորտֆելի

➤ ոչ պակաս, քան Բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալի 40 տոկոսը պետք է լինեն ՀՀ պետական արժեթղթերը:

➤ ոչ ավելի, քան Բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալի 60 տոկոսը կարող են լինեն այլ արժեթղթեր:

Արժեթղթերի պորտֆելում Բանկի հետ փոխկապակցված անձանց կողմից թողարկված արժեթղթերը չեն կարող գերազանցել Բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալի 25 տոկոսը և արժեթղթերի պորտֆելի 35 տոկոսը՝ այնպես, որ չխախտվի Բանկի հետ կապված անձի/անձանց մասով Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված նորմատիվի չափը:

Բանկի պետական պարտատոմսերի պորտֆելի միջին եկամտաբերությունը, որպես կանոն, չպետք է ավելի ցածր լինի, քան Բանկի կողմից դրամով ներգրավված միջոցների համար վճարվող վեցամսյա ավանդների միջին տոկոսադրույքը:

Բանկի ներդրումների արդյունավետության գնահատումը սահմանվում է Բանկի ներքին իրավական ակտերով:

#### **4.4.5 Ռեպո/Հակադարձ ռեպո համաձայնագրերով գործառնություններ.**

Բանկը ռեպո/հակադարձ ռեպո համաձայնագրեր կնքում է ՀՀ ԿԲ, ՀՀ ռեզիդենտ բանկերի, ֆինանսական շուկայի այլ մասնակիցների և Բանկի կորպորատիվ հաճախորդների հետ՝ բացառապես Քաղաքականության 4.4.3 ենթա կետի առաջին պարբերությամբ սահմանված արժեթղթերով: Այլ արժեթղթերով ռեպո համաձայնագրեր կնքվում են բացառապես Վարչության նախագահի համաձայնությամբ:

#### **4.4.6 Ներդրումային քաղաքականություն և ռազմավարություն.**

Բանկի ներդրումային քաղաքականությունն իրականացվում է Բանկի խորհրդի կողմից հաստատված ռազմավարության շրջանակներում, իսկ Բանկի ընթացիկ ներդրումների ուղղությունների որոշումն իրականացնում է Բանկի վարչությունը և Վարչության նախագահը՝ հաստատված ռազմավարության և տարեկան նախահաշվի շրջանակներում:

Կախված Բանկի կողմից ընտրված ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելից, արժեթղթերի պորտֆելի կառուցվածքից և ֆինանսական շուկայի կանխատեսումներից՝ ԱՊԿԿ-ն որոշում է ձեռք բերվող արժեթուղթը՝ Քաղաքականության 4.4.4 ենթակետի առաջին պարբերությունում նշված անհրաժեշտ դասով հաշվառման հարցը:

Իրական արժեքով հաշվառվող արժեթղթերի վերագնահատումն իրականացվում է «Գործառնական օր» համակարգի միջոցով՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԲ կողմից օրական կտրվածքով հրապարակվող պարտատոմսերի եկամտաբերության կորը, ինչպես նաև հաշվի առնելով Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջները:

#### **4.4.7 Ներդրումների հսկողության և վերանայման համակարգեր.**

Ներդրումների հսկողության և վերանայման մեխանիզմ է հանդիսանում պորտֆելի մոնիթորինգը: Մոնիթորինգի արդյունքները, արժեթղթերի շուկաների վերլուծություններն Ստորաբաժանման կողմից եռամսյակը մեկ անգամ ներկայացվում են ԱՊԿԿ:

ԱՊԿԿ-ն, հաշվի առնելով ներկայացված հաշվետվությունը, կարող է արժեթղթերի պորտֆելի ընդհանուր ծավալը և ներդրումների նորմատիվների սահմանաչափերը վերանայելու առաջարկություն ներկայացնել Բանկի խորհրդին և Վարչությանը:

Ներդրումների ընթացիկ հսկողությունն իրականացվում է ներքին սահմանաչափերի միջոցով Ստորաբաժանման և ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից: Չաշխատող արժեթղթերի դասակարգման սկզբունքները, ինչպես նաև ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կանոնները սահմանվում են Բանկի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգը սահմանող ներքին իրավական ակտով:

#### **4.4.8 Ռիսկերի կառավարման մեխանիզմներ.**

Հաշվի առնելով արժեթղթերում ներդրումների ռիսկային բնույթը՝ Բանկն արժեթղթերում ներդրումների ռիսկայունությունը նվազեցնելու նպատակով ղեկավարվում է ֆինանսական ռիսկերի կարգավորման և վերահսկման ներքին նորմատիվներով:

Արժեթղթերում ներդրումների ռիսկայնությունը նվազեցնելու և ընդունելի ռիսկային գոտում գործելու նպատակով Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանումն առնվազն տարեկան կտրվածքով, կախված արժեթղթերի ժամկետայնությունից, իրականացնում է արժեթղթերի պորտֆելի վերլուծություն, որոնց արդյունքները ներկայացվում են ԱՊԿԿ-ին:

#### **4.4.9 Ներդրումային գործառնությունների և եկամուտ/վնասի հաշվառման մատյան.**

Ստորաբաժանումը պարտավոր է վարել իր կողմից իրականացված ներդրումային գործառնությունների մատյան:

#### **4.5 Դրամային (փողի) շուկաներում գործունեության քաղաքականություն.**

##### **4.5.1 Դրամային գործառնությունների իրականացման նպատակները.**

Բանկը դրամային գործառնություններ է իրականացնում հիմնականում իրացվելիության կառավարման և ապահովման ու վերատեղաբաշխման նպատակով՝ լրացուցիչ եկամուտ ստանալու ակնկալիքով:

##### **4.5.2 Դրամային գործառնություններ.**

Բանկը դրամային գործառնություններ է իրականացնում ՀՀ ԿԲ, ՀՀ բանկերի, ոչ բանկ ֆինանսավարկային կազմակերպությունների հետ:

Բանկն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված, ինչպես նաև միջազգային պրակտիկայում կիրառվող դրամային գործառնությունները, եթե դրանց իրականացման կարգը նկարագրված են Բանկի ներքին իրավական ակտերով:

##### **4.5.3 Դրամային գործառնությունների նկատմամբ սահմանափակումներ.**

Բանկը ՀՀ ԿԲ հետ դրամային գործառնություններ իրականացնում է առանց սահմանափակումների:

ՀՀ ռեզիդենտ բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների, ոչ ռեզիդենտ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների հետ տեղաբաշխման նպատակով դրամային գործառնություններ իրականացվում են՝ հիմք ընդունելով տվյալ կազմակերպության համար Բանկի կողմից սահմանված ռիսկի առավելագույն չափը, ինչպես նաև ՀՀ ԿԲ նորմատիվներով սահմանված սահմանափակումները:

##### **4.5.4 Դրամային գործառնությունների և եկամուտ/վնասի հաշվառման մատյան.**

Ստորաբաժանումը պարտավոր է վարել իր կողմից իրականացված դրամային գործառնությունների մատյան:

#### **4.6 Թղթակցային հաշիվերի բացման, վարման և փակման քաղաքականությունը.**

**4.6.1** Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերի հետ թղթակցային հարաբերություններ հաստատելիս Բանկն առաջնորդվում է գործող օրենքներով, նորմատիվ իրավական այլ ակտերով, Քաղաքականությամբ, Բանկի այլ ներքին իրավական ակտերով:

**4.6.2** Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերի հետ թղթակցային հարաբերությունները հաստատվում են ֆինանսական շուկայում գործառնությունների, փոխհաշվարկների արագ

և արդյունավետ իրականացման, ինչպես նաև հաճախորդների սպասարկման ապահովման նպատակով:

**4.6.3** Թղթակցային հաշիվներ բացելիս Բանկը պետք է առաջնորդվի խելամտության սկզբունքով՝ առաջնահերթություն տալով Բանկի հաճախորդների փոխանցումների սպասարկման ապահովման արդյունավետության սկզբունքին, համապատասխանաբար Բանկը պետք է ունենա գործառնական թղթակցային հաշիվներ և անհրաժեշտության դեպքում՝ գործարքային թղթակցային հաշիվներ, որոնք, որպես կանոն, պետք է օգտագործվեն հիմնականում գանձապետական գործարքների կամ Բանկի առանձնահատուկ գործառույթի իրականացման նպատակով, եթե այդ գործարքները հնարավոր չէ իրականացնել գործառնական թղթակցային հաշիվներով:

#### **4.6.4 Թղթակցային հաշիվների կառավարում.**

Բանկում թղթակցային հաշիվների կառավարման համար պատասխանատու է Գլխավոր Գանձապետը:

Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանումը Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով առնվազն կիսամյակը մեկ անգամ իրականացնում է թղթակցից բանկերի ֆինանսական վերլուծություն:

**4.6.5** Թղթակցային հաշիվների բացման, սպասարկման և փակման կարգը մանրամասն նկարագրված է թղթակցային հաշիվների բացման, սպասարկման և փակման կարգը սահմանող Բանկի ներքին իրավական ակտով:

#### **4.7 Արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման ընթացքում շահերի բախման բացառմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումներ.**

**4.7.1** Շահերի բախումը Բանկի, Բանկի աշխատողների և այլ անձանց միջև առաջացող գույքային և/կամ այլ շահերի հակասությունն է, որի արդյունքում Բանկի աշխատողների գործողությունները կամ անգործությունը կարող են առաջացնել վնասներ կամ այլ ոչ բարենպաստ հետևանքներ Բանկի հաճախորդների համար:

**4.7.2** Արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման ընթացքում Բանկի, Բանկի աշխատողների և հաճախորդների միջև հնարավոր շահերի բախման բացառման նպատակով Բանկում իրականացվող միջոցառումները և աշխատողների վարքագծին առնչվող պահանջները՝

- Բանկի աշխատողների, Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և հաճախորդների հետ գործարքները կնքվում են բացառապես օրենսդրության պահանջներին համապատասխան և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված

կարգով.

- Արժեթղթերի շուկայում ծառայություններ մատուցող Բանկի աշխատողները գործարքներ իրականացնելիս դրսևորում են մասնագիտական բարձր մակարդակ և շահերի բախման հնարավոր դեպքերի ի հայտ գալու դեպքում առաջնահերթությունը տալիս են հաճախորդների գործարքների կատարմանը (գերադասելով Բանկի և Բանկի հաճախորդների շահերը սեփականից)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի սեփական գործարքների, Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց գործարքների իրականացումը բխում է հաճախորդի շահերից և այն չի խոչընդոտում վերջինիս գործարքի իրականացմանը.

- Արժեթղթերի շուկայում ծառայություններ մատուցող Բանկի աշխատողներն անվերապահորեն հետևում են ներդրումային գաղտնիքի (ծառայողական տեղեկատվության) պահպանման և Բանկի ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման՝ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին.

- Արժեթղթերի շուկայում ծառայություններ մատուցող Բանկի աշխատողները չեն իրականացնում հաճախորդի շահերին հակասող գործարքներ և չեն տրամադրում ապակողմնորոշող խորհրդատվություն՝ արժեթղթերի շուկայում գործարքներ կնքելու վերաբերյալ, որի վերջնական նպատակն է ստեղծել ի շահ Բանկի գործարքներ կնքելու համար բարենպաստ պայմաններ կամ, որը հակասում է արժեթղթերի շուկայում ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ օրենսդրության պահանջներին:

- Արժեթղթերի շուկայում ծառայություններ մատուցող Բանկի աշխատողները պարտավոր են իրենց իրավասությունների շրջանակներում ծառայությունների մատուցման ընթացքում ի հայտ եկած կամ հնարավոր շահերի բախման վերաբերյալ հայտնի դարձած տեղեկատվության մասին իրազեկել անմիջական ղեկավարին, որն էլ իր հերթին ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր շահերի բախումը բացառելու և կանխելու ուղղությամբ:

#### **4.8 Ֆինանսական շուկաներում գործունեություն իրականացնող աշխատողների լիազորությունները.**

Ֆինանսական շուկաներում գործունեություն իրականացնող աշխատողների համար Գլխավոր գանձապետի ներկայացմամբ Վարչության նախագահի կողմից կարող են սահմանվել առնվազն հետևյալ անհատական սահմանաչափերը.



### **Արտարժույթային գործարքների համար.**

- մեկանգամյա իրականացվող գործարքի ծավալի սահմանափակում՝ առանց դիրքի փակման կամ դիրքի փակմամբ, Բանկի հաճախորդների և միջբանկային շուկայի համար տարանջատ.

- օրական մեկ արտարժույթով և բոլոր արտարժույթներով իրականացվող գործարքների ընդհանուր ծավալի սահմանափակում՝ առանց դիրքի փակման կամ դիրքի փակմամբ, կախված ձևից՝ կանխիկ կամ անկանխիկ, գործառնական ռիսկ պարունակող կամ առանց գործառնական ռիսկի.

- մեկ օրվա ընթացքում թույլատրելի վնասի առավելագույն չափի սահմանափակում:

### **Արժեթղթերով և դրամային (փողի) շուկաներում իրականացվող գործառնությունների համար.**

- գործարքի ծավալի սահմանափակում.
- սահմանված ներգրավման տոկոսադրույքներից հաճախորդներին տրվող շեղման թույլատրելի չափի սահմանափակում:

### **Կանխիկի կառավարման գործառույթների համար.**

- Բանկի թղթակցային հաշիվներից համախառն կանխիկացման առավելագույն չափի սահմանափակում.
- սահմանված սահմանաչափերի ներքո տարածքային ստորաբաժանումներում և գլխավոր դրամապահոցում կանխիկի մնացորդներից շեղման չափի սահմանափակում:

## **5. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

5.1 Քաղաքականությունը պարտադիր է ֆինանսական շուկաներում Բանկի կողմից իրականացվող գործառնություններում ընդգրկված բոլոր ստորաբաժանումների և աշխատողների համար:

5.2 Քաղաքականության կիրառման ընթացիկ հսկողությունն իրականացնում է Բանկի գլխավոր գանձապետը՝ Քաղաքականությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

5.3 Քաղաքականության կիրառման ընդհանուր վերահսկողությունն իրականացնում են Բանկի հսկողական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումները: